# ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

« » _______________ 2019 թվականի N ____-Լ

**ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման 1-ին հավելվածի 24-րդ կետի 24.1 ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարին՝

մինչև 2020 թվականի սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ Վարչապետի աշխատակազմ ներկայացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման միջոցառումների ծրագիրը:

**Հավելված**

**Կառավարության**

**2019 թվականի ....-ի ....-ի**

**N ... որոշման**

ՏԵՍԼԱԿԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

1. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը» (այսուհետ՝ Տեսլական) մշակվել է Առողջապահության նախարարության կողմից:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. Ներկայումս Առողջապահության նախարարությունը գործուն քայլեր է ձեռնարկում Հայաստանի Հանրապետությունում առողջապահական համակարգի հզորացման ուղղությամբ: Առողջապահության ոլորտի առջև ծառացած մարտահրավերները բազմաթիվ են. առողջապահական համակարգի ծախսարդյունավետության բարձրացում, առկա ֆինանսական միջոցների առավել արդյունավետ օգտագործում, առողջապահական ենթակառուցվածքների բարելավում և ժամանակակից բժշկական սարքավորումներով հագեցում, նորագույն էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի ներդրում, կադրային ներուժի շարունակական կրթում և որակավորման բարձրացում և որ ամենակարևորն է՝ համապարփակ առողջապահական ծածկույթի ապահովում: Այս համատեքստում կենսական կարևորություն է ձեռք բերում բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավումը, քանի որ վերջինս բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ամենակարևոր բաղադրիչն է: Անհնար է հասնել վերոնշյալ թիրախներին առանց որակի բարելավումն ապահովող կառավարման համակարգերի և համապատասխան մեխանիզմների ստեղծման, ներդրման և շարունակական կիրառման, իսկ համապարփակ առողջապահական ծածկույթի ապահովումն արդյունավետ և մատչելի կլինի միայն այն դեպքում, եթե առկա է որակյալ բժշկական օգնություն և սպասարկում: Ուստի, բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավումը պետք է լինի այն հիմնական առանցքը, որի շուրջ պետք է ձևավորվի ընդհանուր առողջապահական համակարգի զարգացման ռազմավարությունը:

3. ՈՐԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

3. «Որակի» մասին տրված բոլոր ձևակերպումների հիմքում պացիենտի բուժման արդյունավետությունն ու անվտանգությունն է, ինչպես նաև նրանց բավարարվածությունը մատուցված ծառայություններից: Հատկապես ուշադրության է արժանի Ավետիս Տոնապետյանի եռաչափ մոդելը («the structure-process-outcome model»), որը գլխավորապես կենտրոնանում է որակի գնահատման մոտեցումների վրա: Առավել ամբողջական է Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2018 թվականի ձևակերպումը որակի մասին, համաձայն որի բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունները պետք է լինեն արդյունավետ, անվտանգ և մարդակենտրոն, ինչպես նաև ժամանակին, անաչառ, ամբողջական և ծախսարդյունավետ:

4. Միջազգային պրակտիկայում կիրառվող որակի բարելավման ժամանակակից մոտեցումը հենվում է «STEEEPS/I» մոդելի վրա, այն է.

1) «S – Safe» - բժշկական օգնության և սպասարկման անվտանգություն,

2) «T- Timely» - բժշկական օգնության և սպասարկման ժամանակին տրամադրում,

3) «E- Effective» – արդյունավետ՝ հիմնված ժամանակակից ապացուցողական գիտական հենքի վրա,

4) «E- Efficien» – օգտավետ, ծախսարդյունավետ,

5) «E- Equitable» – անկողմնակալ, անաչառ,

6) «P- Patient oriented» – պացիենտի կարիքներին միտված,

7) «S - Sustainabie /I – Integrated» - շարունակական / ամբողջական:

5. Որակի կառավարման համակարգում բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման գործողությունները ներառում են պլանավորումը, պարբերական մշտադիտարկումը, հետագա փոփոխությունները և/կամ շտկող գործողությունները՝ ապահովելով սահմանված որակի ցուցանիշներին և ստանդարտներին համապատասխանությունը:
6. Թվարկված գործողությունները պետք է լինեն շարունակական և պետք է ընդգրկեն առողջապահական համակարգի բոլոր 3 օղակները, այն է.

1) առողջապահության ոլորտի աշխատողներ,

2) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ,

3) առողջապահական համակարգի կազմակերպում, համակարգում և վերահսկողություն իրականացնողներ:

4. ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

7. Ներկայացված Տեսլականը խնդիր է դնում Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնության և սպասարկման որակի շարունակական բարելավումը դարձնել մշակույթ: Բժշկական օգնության և սպասարկման որակը պետք է դառնա առողջապահական համակարգի հիմնասյուներից մեկը:
8. Որակի բարելավմանն ուղղված նախաձեռնությունները հիմնականում ազդելու են որակի հետևյալ տիրույթների վրա` առաջնորդություն, տեղեկատվություն, կանոնակարգում, չափորոշիչներ և կազմակերպչական կարողություններ:
9. Բարձրորակ առողջապահական ծառայություններ մատուցելու նպատակով նախատեսվում է բժշկական օգնության և սպասարկման որակի կառավարման, վերահսկման, բարելավման ռազմավարության մշակում և հաստատում, որի հիմնական ուղղությունները կլինեն.

1) կանխարգելիչ բժշկության հզորացման նպատակով շեշտադրել և ընդլայնել հիվանդությունների կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանն ուղղված աշխատանքները,

2) մշակել ինտեգրված մոտեցում բժշկական ծառայությունների որակի պլանավորման, բարելավման, գնահատման և ապահովման նպատակով,

3) որակի բարելավմանն ուղղված միջոցառումները փոխկապակցել առողջապահական համընդհանուր ծածկույթի ներդրման հետ,

4) զարգացնել առողջապահական տեղեկատվական համակարգերը` որակի բարելավման հարցում առանցքային դերակատարում ապահովելու նպատակով: